



**«ԲԱՑ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ» ՕՐ  
ՃԵՄԱՐԱՆՈՒՄ**

Նոյեմբերի 10-ին Գևորգյան հոգևոր ճեմարանի հանդիսությունների սրահում «Հայաստանի էլեկտրոնային գրադարանների կոնսորցիումը» և Հայաստանի ազգային գրադարանը անցկացրին սեմինար՝ «Բաց մատչելիության գիտատեղեկատվական պահուցների արդի վիճակը և զարգացման հեռանկարները Հայաստանում» թեմա-ով:

Սեմինար-քննարկումը կայացավ Ար.



Էջմիածնի Մատենադարանի, Գևորգյան հոգևոր ճեմարանի և Հայաստանի Ազգային գրադարանի նախաձեռնության և համագործակցության շնորհիվ:

Ձեկույցներով հանդես եկան «Բաց մատչելիության շաբաթ» ծրագրի տարածքային համակարգող Տիգրան Զաքարյանը և Հայաստանի Ազգային գրադարանի տնօրեն Տիգրան Զարգարյանը:

**ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ՕՐՀՆԵՑ  
ԱՌԱՋԻՆ ԼՍԱՐԱՆՑԻՆԵՐԻՆ**

Նոյեմբերի 12-ին Գևորգյան հոգևոր ճեմարանի Ա լսարանի սաները՝ Ճեմարանի տեսուչ Տ. Գարեգին վրդ. Համբարձումյանի ուղեկցությամբ, այցելեցին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

Վեհափառ Տերը հայրաբար խրատեց ճեմարանականներին, ի մասնավորի հորդորելով, որ սաներն անեն հնա-



րավորինը Մայր Եկեղեցուն և ազգին պիտանի հոգևորականներ դառնալու համար: Սրան հասնելու համար

անհրաժեշտ է զբաղվել ինքնակրթությամբ, աշխատել սեփական անձի զարգացման ուղղությամբ:

Հորդորական այս խոսքերը լսելուց հետո ճեմարանականները ծնկի եկան Վեհափառ Հոր առջև՝ հայցելով նրա օրհնությունը: Վերջում սաներն Ամենայն Հայոց Հայրապետից նվեր ստացան Ավետարաններ և, հրաժեշտ տալով նրան, վերադարձան Ճեմարան:

**ԳՐԱԲԱՐԻ ՕԼԻՄՊԻԱԴԱ**

Նոյեմբերի 12-ին Գևորգյան հոգևոր ճեմարանի չորս սաներ՝ Դ լսարանից Շավարշ դպ. Ալվազյանն ու Իշխան դպ. Քամալյանը, Գ լսարանից Դավիթ դպ. Գիշյանն ու Դավիթ դպ. Հունանյանը, Երևանում մասնակցեցին «Գրաբար՝ ոսկեղենիկ լեզու Հայոց» խորագրով մրցույթի, որը կազմակերպվել էր ԵՊՀ Աստվածաբանության և Հայ բանասիրության ֆակուլտետների ուսանողական գիտական ընկերությունների ջանքերով:



Մրցույթում ընդգրկված թեստերի հեղինակներն էին Գևորգյան ճեմարանի գրաբարի դասախոս դոց. Նորայր Պողոսյանը և ԵՊՀ Հայ բանասիրության ֆակուլտետի Հայոց լեզվի պատմության ամբիոնի դասախոս Ռուզաննա Շաբոյանը:

**ՀԱՂՁԱԿԱՆ ԲԱՆԱՎԵՃ**

Նոյեմբերի 14-ին տեղի ունեցավ «Երբ բանավիճում են երիտասարդները» բանավեճի ակումբի հերթական հանդիպումը, որի շրջանակներում Գևորգյան հոգևոր ճեմարանի «Լույս» թիմն անցկացրեց իր երկրորդ բանավեճը:

Ճեմարանի թիմն այս անգամ մրցում էր ԵՊՀ ուսանողներից կազմված «Per aspera ad astra» թիմի հետ: Բանավեճի թեման էր՝ «Կրթության արդյունավետությունը կախված չէ աշակերտներին հանձնարարվող տնային աշխատանքներից»: Մինչ խաղը սկսելը՝ խաղի հաղորդավարներն անցկացրին վիճակահանություն, ըստ որի, «Per aspera ad astra» թիմն իր դիրքորոշումը պետք է պաշտպաներ համաձայն ենք

դիրքորոշմամբ, իսկ «Լույս» թիմը՝ համաձայն չենք:

Ըստ ժյուրիի անդամների՝ երկու թիմերն էլ շատ կազմակերպված էին, նախապատրաստական աշխատանքն



ակնհայտ երևում էր, ինչը շատ գովելի փաստ է: Թեմայի վերաբերյալ բերվեցին հետաքրքիր փաստարկներ, որոնք առավել համոզիչ էին դարձնում թիմերի խոսքը: Ակնհայտ էր նաև թիմային խաղը:

«Հարց ու պատասխան» և «Եզրափակիչ» փուլերի ընթացքում Ճեմարանի «Լույս» թիմն առավել վստահ և հիմնավոր փաստարկներ առաջադրեց և լավագույնս պաշտպանեց իր դիրքորոշումը:

Ավարտին՝ հանդիսատեսի և ժյուրիի քվեարկության արդյունքում՝ հաղթող ճանաչվեց Ճեմարանի «Լույս» թիմը: Այսպիսով, Ճեմարանի թիմն անցավ կիսաեզրափակիչ փուլ:

**ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԱՄԵՐԻԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ**

Նոյեմբերի 18-ին Գևորգյան հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Գարեգին վրդ. Համբարձումյանը «Ժամանակակից կրոնագիտություն» թեմայի շուրջ դասախոսությամբ հանդես եկավ Հայաստանի Ամերիկյան համալսարանում: Դասախոսության ավարտին ներկաները բարձրաձայնեցին իրենց հուզող հարցերը և ստացան պատասխաններ:

Հարցուպատասխանի ընթացքում քննարկվեցին ընդհանուր բարոյագիտական, կրոնագիտական, ինչպես նաև մասնավորապես Հայ առաքելական եկեղեցուն և Գևորգյան հոգևոր



ճեմարանին վերաբերող հարցեր:



Այս անգամ «Աստվածաբանում է գիտնականը» շարքի շրջանակներում մեր գրուցակիցն է UNESCO-ի կենսաէթիկայի ամբիոնի հայկական մասնաճյուղի վարիչ, Գևորգյան հոգևոր ճեմարանի դասախոս տիկին Ս. Հ. Դավթյանը:

- Տիկին Դավթյան, ինչպիսի՞ հարաբերության մեջ են գիտությունն ու հավատը:

- Գիտենք, որ մարդու մոտ առաջինը եղել է հավատը. հավատ բնությանը, նրա տարերքներին, գերբնական ուժերին: Եվ այդ հավատի միջոցով մարդը կարողացավ զարգանալ թե՛ բանականորեն և թե՛ բարոյապես: Ցավոք, դա մոռացվել է և կամ անտեսվում: Մարդը ձեռնոց է նետում ամեն ինչին: Եթե մարդը ձեռնոց է նետում Աստծուն և աստվածաստեղծ բնությանը ու ասում՝ կարող եմ մարդ ստեղծել և կամ հոգին առնել, ապա դա անպատճառ պիտի պատժվի: Արդյո՞ք մարդ իրավունք ունի քաղելու այն պտուղները, ինչին ձեռքը հասնում

է: Կենսաէթիկական գիտակցությունը մենք սերմանում ենք, որպեսզի Աստծուն և բնությանը ձեռնոց նետող գիտնականներ չծնվեն, այլապես կպատժվի մարդկությունը: Գիտնականը հավատ պետք է ունենա: Եթե մեզը հավատ չլինի Աստծո կամ գերբնականի հանդեպ, լավ գիտնական չես կարող լինել, որովհետև գիտությունը սահման ունի այնքանով, ինչքանով մենք հասել ենք դրան՝ առանց չարիք բերելու:

- Բժշկությունը՝ որպես գիտություն, արդյո՞ք չի հակասում աստվածաբանությանը:  
- Եթե բժիշկը հավատ չունի և կամ Աստված չկա բժշկի մեջ, այդ բժիշկը չի կարող բուժել: Ինչո՞ւ: Պատասխանն այս է՝ եթե նա ընդունեց, որ դիմացի հիվանդը միայն կենսաբանական մարմին ունի և հոգի չունի, ապա բժիշկը կնմանվի մի խառատի կամ ինժեների, որը փչացած կամ կոտրված մասը կվերականգնի ու կվերջացնի: Մինչդեռ գոյություն չունի առանձին քիթ, կոկորդ, սիրտ, այլ գոյություն ունի մարդ և այդ մարդու նկատմամբ համակարգային մոտեցում պետք է դրսևորել, որովհետև այդ մարմինը ունի հոգի, հետևաբար, մի՛ բժշկիր մարմինը, քանի դեռ չես բուժել հոգին: Այն բժիշկը, որը հավատ չունի, չի կարող երբևէ լավ բժիշկ լինել:

- Ինչպե՞ս է աստվածաբանությունը լրացնում կենսաէթիկային:  
- Եթե գիտությունը պետք է զարգանա առանց խղճի և բարոյականության, ապա մարդկությունը կզնա կործանման և նրան կսպառնան աղետալի հետևանքներ:

Կենսաէթիկական ստեղծվեց գիտնականների համար, որ առաջնորդվեն խղճով, հավատով և Աստծո լույսով, որպեսզի ստեղծածը բարիք բերի: Կենսաէթիկայի հիմքը առ Աստված հավատն է, և կենսաէթիկա առանց Աստծու, բնավ, գոյություն չունի: Մեր արժեքները և նորմերը աստվածաշնչյան են կամ աստվածաշնչյան ծագում ունեն:

Պարրասպեց Ռոման ուրկ. Մարտիանը

### ԱՇԽԱՐՀԻ ԾԱԳՈՒՄԸ

Բոլորիս քաջ հայտնի է աշխարհի արարման սուրբգրային պատումը, թե ինչպես Աստված վեց օրերի ընթացքում ստեղծեց ողջ երկինքն ու երկիրը: Միաժամանակ, բոլորս էլ լսել ենք կամ գիտենք գիտական այնպիսի տեսություններ, ըստ որոնց, աշխարհի գոյացումը եղել է սուրբգրային պատկերացումից բավականին տարբեր: Այսպիսի տեսությունների առաջ գալուն մեծապես նպաստեց ֆիզիկական տիեզերագիտության (physical cosmology), աստղագիտության (astronomy) և աստղաֆիզիկայի (astrophysics) ոլորտներում զգալի առաջընթացը, որն էլ հնարավորություն տվեց նոր մոտեցումների և տեսությունների առաջացման: Պատահական չէ, որ արդի ժամանակաշրջանը համարվում է «տիեզերագիտության ոսկեդար»: Վերջին շրջանում հատկապես մեծ աղմուկ հանած տեսություններից էր այսպես կոչված «Մեծ պայթյունի» (Big bang) տեսությունը: Այստեղ ծագում է մի հարց. արդյո՞ք այս տեսությունները եկան հերքելու Աստվածաշնչի ճշմարտությունը, թե՛ կարելի է համադրել այդ տվյալները կամ էլ որդեգրել այնպիսի մոտեցում, ըստ որի, չհերքելով հանդերձ գիտական տեսակետների ճշմարտացիության հնարավորությունը, կարելի լինի ընդունել Սուրբ Գրքի ճշմարտացիությունը: Աստվածաշունչ և գիտություն երկխոսության մեջ կան մի քանի հիմնական մոտեցումներ, որոնցից այստեղ կառանձնացնենք երկուսը՝ **ա**. Աստվածաշունչն ու գիտությունն իրար չեն հակասում, և կարելի է համադրել դրանց տված տեղեկությունները, **բ**. Աստվածաշունչն ու գիտությունը լիովին տարբեր են, որոնցից առաջինն ունի իր ուրույն նպատակը, իսկ երկրորդը՝ իրենը:



Առաջին մոտեցման վրա օրինակներից է հենց վերոհիշյալ Պայթյունի տեսության և Ծննդոցի պատկերների համադրումը: Երկուսի համաձայն էլ աշխարհը սկիզբ է առնում ինչ-որ կետում, այսինքն՝ ունի հստակ և որոշակի սկիզբ, և այդ սկզբնավորումը տեղի է ունենում լույսի արտամղումով (եղիցի լույս): Արդի գիտությունը պնդում է, որ մարդն սկզբնավորվել է կենտրոնական Աֆրիկայում, ինչը նորից նշանակում է, որ մարդը ծագել է մի կետից (Ադամ): Սակայն, պետք է հաշվի առնել, որ միշտ չէ, որ հնարավոր է համադրել գիտության և Աստվածաշնչի տվյալները: Օրինակ՝ Սուրբ Գրքում հանդիպում ենք արևի՝ երկիր մոլորակի շուրջ պտտվելու պատկերին, որը բնականաբար հակասում է գիտական մոտեցմանը: Այս տեսակետից ավելի օգտակար է երկրորդ մոտեցումը, քանի որ, ըստ դրա, բնական է, որ Աստվածաշնչի տեղեկությունները չհամապատասխանեն մերօրյա գիտության տվյալներին: Գիտությունը նպատակ ունի և փորձում է պատասխանել այլ հարցերի, իսկ Սուրբ Գրքը՝ այլ: Աշխարհի առաջացման համար գիտության հարցադրումն է՝ **երբ և ինչպես**, մինչդեռ Աստվածաշունչը պատասխանում է **ով և ինչու** հարցերին: Սուրբ Գրքը խոսում է աստվածաբանության լեզվով և ցույց է տալիս արարչության նպատակը, իսկ գիտությունը փորձում է գիտական մեթոդներով վերհանել աշխարհի գոյացման եղանակը: Սուրբ Գրքը հիմնված է իր ժամանակվա մարդու գիտելիքների վրա և դրանց միջոցով իր որոշակի պատգամն է փոխանցում՝ անշուշտ աստվածաբանության լեզվով:


Ամփոփելով՝ ասենք, որ Սուրբ Գրքը բնավ նպատակ չունի մեզ բնագիտական տեղեկություններ հաղորդելու. այդ գործը պատկանում է գիտության ոլորտին: Չնայած սրան, այս հանգամանքը դեռ չի նշանակում, որ աստվածաշնչյան պատումներում լիովին բացակայում են գիտական տվյալները: Գիտության պարագայում էլ պետք է նշել, որ այն որոշակի սահմաններ ունի և չի կարող դուրս գալ իր գործառույթներից՝ փորձելով պատասխանել այն հարցերին, որոնց պատասխանը վեր է իր ուսումնասիրության բնագավառից: Այսպիսով, կարելի է կողք կողքի դնել կամ համադրել գիտությունն ու Աստվածաշունչը՝ առանց շփոթելու դրանց նպատակներն ու գործառույթները:

Պարրասպեց Հարություն սրկ. Տեր-Ասպրոյանը

# ԿԵՂԾ ՔՐԻՍՏՈՍ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԷՋԵՐՈՒՄ

Ըստ ԺԹ դարավերջի գերմանացի հայտնի աստվածաբան Ադոլֆ Հանսկի՝ Քրիստոսին գեղարվեստականորեն նկարագրել փորձող մարդկանց հոգում ինչ-որ խոր զգացմունքային մի բան կա: Այդ զգացվում է բոլոր նրանց մեջ, ովքեր ջանում են մոտենալ Հիսուս Քրիստոսին իրենց անհատականության և հետաքրքրասիրության տեսանկյունից: Նրանք փորձում են իր մեջ գտնել իրենց կամ ինչ-որ մաս ստանալ Նրանում: Սակայն, ոչ բոլորին է հաջողվում այդ անել:

Քրիստոսի գեղարվեստորեն պատկերագրման առաջին փորձերը նույնքան հին են, որքան և Ավետարանները: Նմանատիպ գրականությունը աստվածաբանության մեջ հայտնի է «Պարականոն ավետարաններ» գրական անվանումով, և արդեն ԺԹ-Ի դարերում գրողների նմանատիպ հակվածությունը դեպի Քրիստոսի նկարագրությունը պատահական և ինքնաբերական երևույթ չէր: Սակայն ինչպես բուն պարականոնները, այնպես էլ այս ստեղծագործությունների մեծամասնությունը, որոնք համեմված էին ամեն մի գրողին յուրահատուկ ազգագրական հակասություններով և այլն, մատնված գեղարվեստորեն նկարագրելու անհաջող աստվածաբան Շարլ Դյուպինը գրում է. պատճառը, որ ոչ ոքի չի հաջողվում նրանում ԺԹ դարի ընթացքում ձևավորվում է մթնոլորտ, ինչի արդյունքում Հեգելը գրում է ներկայացնում մարդ-ուսուցչի կերպարով՝ Հեգելյան ազդեցության ներքո միմյանց ստեղծագործություններ, որոնցից կաթոլիկ ճեմարանական և հետագայում «Հիսուսի կյանքը» ստեղծագործությունը, տասներեք անգամ, ինչն էլ խոսում է Այս ստեղծագործության մեջ Քրիստոս մահկանացու, որը ծնվում է գեղեցիկ հանգստանում է դրա խաղողի թփերի գեղեցկությամբ: Իր հասունության կողմից, ընկնում նրա ուսուցման ազդեցության տակ. մասնավորաբար, այն համոզմամբ, թե «քո կառուցածը ոչ ոք չի քանդի»: Ոգևորված Հավիանների խոսքերից՝ ոտքի է կանգնում Երուսաղեմի և նրա հոգևոր ու աշխարհիկ նվիրապետական խավի դեմ, քարոզում սրտի ու սիրո համայնք, սակայն վերջում, անկարող լինելով շարունակել պայքարը, «պարտվում է» և խաչվում:



հավելումներով, աստվածաբանական էին անհաջողության: Քրիստոսին փորձերին ի պատասխան՝ ֆրանսիացի «Քրիստոս անտիկ շրջանի մի միջ է, և դա է տեսնել մարդկային գծեր»: Հիմնականում ռացիոնալիստական մոտեցումներով լի մի իր սեփական «Պարականոն» և Քրիստոսին անտեսելով Նրա աստվածային էությունը: հետևից լույս են տեսնում բազմաթիվ ամենահանգրվանային է դառնում նախկին բողոքական դարձած էռնեստ Ռենանի որը վերահրատարակվում է մոտ գրքի ունեցած հաջողության մասին: նկարագրվում է որպես հասարակ մի այգիներով զարդարված Գալիլեայում, տակ, հիանում Գալիլիայի կույսերի շրջանում մկրտվում է Հովհաննես Մկրտչի

*Պատրաստեց Հարություն սրկ. Քեշիշյանը*

## ԻՆՉ Է ՀԱՎԱՏԸ



Հավատը վստահություն է, համոզմունք ինչ-որ բանի գոյության, ճշմարտության կամ անձի հանդեպ: «Հավատ» բառը նաև կրոնական իմաստ ունի՝ հավատ Աստծո նկատմամբ: Ինչպես Պողոս առաքյալն է ասում. «Հավատ՝ նշանակում է վստահ լինել այն բաներին, որոնց հանդեպ հույս ունենք, և համոզված լինել այն բաներին, որոնք չեն երևում» (հմմտ. Եբր. ԺԱ 1): Մենք՝ քրիստոնյաներս, հույս ունենք փրկության և հավիտենական կյանքի, և վստահ ենք, որ այս փրկությունը կարող է լինել միայն Աստծո միջոցով: Մարդու կյանքում Աստված ներկա է այնքանով, որքանով մարդը հավատում է Նրան: Թեև հավատը չունի չափ, բայց ունի որակ և բովանդակություն, որը պայմանավորված է հավատի առարկայով կամ նպատակով: Եթե հավատում ենք Աստծուն, ապա ընդունում ենք Տիրոջ շնորհն ու օրհնությունը: Այո, քանի որ հավատը կենդանի է ու կենսատու միայն այն ժամանակ, երբ գործում է, բարձրացնում է մարդուն առ Աստված:

Շատ կարևոր է հիշել, որ հավատն առանց գործերի անիմաստ է, քանի որ այդպես հավատացողը ոչնչով չի տարբերվում դևերից, որովհետև դևերն էլ են հավատում և դողում (հմմտ. Հակ. Բ 19): Կան մարդիկ, որ հավատում են, թե կփրկվեն գործերով, և կան մարդիկ, որոնք գործում են, որովհետև հավատում են, որ փրկված են Քրիստոսի հանդեպ հավատով: Քրիստոսին հավատացողը ոչ թե անում է ուղղակի ինչ-որ գործեր, այլ ջանում է նմանվել իր Տիրոջը, իսկ դրա համար նա պարզապես չի կարող չգործել Տիրոջ պատվիրանների համաձայն: Անկախ նրանից, թե հավատն ինչի նկատմամբ է, ճիշտ է, թե սխալ, և ինչ տարրերից է բաղկացած, այն շատ մեծ ազդեցություն է թողնում մարդու անձի և նրա կենսակերպի վրա: Դա կարող է լինել թե՛ դրական, թե՛ բացասական: Կախված հավատի համակարգից՝ մարդու մոտ ձևավորվում են որոշակի արժեքներ, համոզմունքներ և աշխարհայացք: Դրանց վրա էլ արդեն գիտակից, հասուն մարդն սկսում է կառուցել իր կյանքը:

Մարդու հավատն իր ազդեցությունն է թողնում թե՛ անձի հոգևոր աճի վրա, թե՛ անձնական, ընտանեկան հարաբերություններում և թե՛ գործնական կյանքում: Այն մեծ ազդեցություն ունի նաև անձի ինքնադաստիարակման և ինքնակառավարման վրա: Ավելի պարզ ասած՝ հավատն այն ներքին ձայնն է, որը զայրույթի պահին կարող է ստիպել չվիճել, չհայհոյել, չհարվածել կամ չսպանել: Այդ նույն ձայնը ստիպում է օգնության հասնել, բարեգութ և ներողամիտ լինել մարդկանց հանդեպ: Աստծուն չհավատացող մարդն էլ, անշուշտ, որոշակի բարոյական արժեքներ ունի, քանի որ ինքն էլ իր հավատի համակարգն ունի: Սակայն նրանը սուբյեկտիվ հավատ է, որը հաճախ լուրջ շեղումների է տանում: Եվ կարող է արդյոք մարդը լինել անհավատ, եթե խորապես գիտակցի Աստծու գոյությունը: Սակայն ինչպես մեր Տերն է ասում. «Երանի՛ նրանց, ովքեր հավատում են առանց ինձ տեսնելու» (հմմտ. Հովհ. Ի 29):

*Պատրաստեց Վահե ուրկ. Մկրտչյանը*



## Ո՛Վ Է ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԸ

Մեզանում շատ է խոսվում հոգևորականի, նրա առաքելության և աստվածաշնորհի դերի մասին: Անկախ տարիքից՝ այս հարցը մշտապես արդիական ու կարևորված կլինի բոլորի համար:

Առաքելական մեր Մայր Եկեղեցու սկզբունքների համաձայն՝ հոգևոր սպասավորների դերը Քրիստոսի հավատացյալների խնամքն ու պահպանությունն է, Տիրոջ առաքելության իրականացումը:

Եկեղեցու պաշտոնյան՝ հոգևորականը, առաքելական ժառանգորդությամբ տեր և հայր է կարգված Աստծու ժողովրդի վրա, որպեսզի տիրաբար պահպանի և հայրաբար խնամի ու սնի Աստծուց իրեն վստահված հոտը: Հոգևորականը պատասխանատու է Քրիստոս Աստծու առջև՝ ըստ մարգարեի հետևյալ խոսքի. «Մարդու որդի, դու դետ ես կարգված իմ ժողովրդի համար... նրա արյունը քեզանից եմ պահանջելու» (Եզեկ. Գ 17-18): Մինչույն ժամանակ ինչպես Քրիստոս իր մոտ եկողներին բժշկություն էր շնորհում, այնպես էլ հոգևորականն է Աստծու խոսքով խրատում և բժշկում հավատացյալների հոգիները:

Այս առաքելության տեսանկյունից կարևորվում է քահանայի՝ որպես Քրիստոսի պաշտոնյա հոգևորականի բարոյական կերպարը: Քահանայի բարոյականությունն Ավետարանի հետևյալ խոսքից է. «Իմ լուծը ձեր վրա վերցրեք և սովորեցեք ինձնից, որ հեզ եմ և սրտով խոնարհ» (Մատթ. ԺԱ 29), իսկ Սուրբ Պողոս առաքյալն այս մասին գրում է. «Նմանվեցեք ինձ, ինչպես որ եմ՝ Քրիստոսին» (Ա Կորնթ. ԺԱ 1): Քրիստոսին նման լինել. ահա սա է քահանայի բարոյական կերպարը: Այս ամենով հանդերձ՝ նման տառապում է մեղքի հոգևոր բժշկության կարիքն ունի: ասարումը բարի փորձառություն որպեսզի ինքը ևս ողորմաճաբար և նույն ցավերով տառապող համար:

Սուրբ Բարսեղ Կեսարացին որ քահանայության պատիվը քանզի անմեղ են, այլ մարդկանց, մեղանչում և հույս ենք դնում վրա, նույնպես և ձեզ տանք հույսը»: Ուստի՝ հարկ է մշտապես հորդորը. «Աղոթեցեք ձեր ձեզ Աստծու խոսքն ասացին»



ասում է. «Նախ սա իմացեք, չվստահվեց հրեշտակներին, որպեսզի ինչպես որ մենք ենք Քրիստոսից թողություն ստանալու թողության և ապաշխարության իիշել սուրբ Պողոս առաքյալի առաջնորդների համար, որոնք (հմմտ. Եբր. ԺԳ 7):

*Պատրաստեց Սևակ դպիր Հակոբյանը*

## ՍՐ. ԹՊՂԵՏՈՒ ԵՎ ՍՐ. ԲԱՐԴՈՒԴԻՄԵՏՈՒ ԱՌԱՔՅԱԼՆԵՐ

Սր. Թաղետոս և սր. Բարդուղիմեոս առաքյալները համարվում են Հայ առաքելական սուրբ եկեղեցու հիմնադիրները: Մինչ համբարձվելը՝ Հիսուս Քրիստոս պատվիրեց իր առաքյալներին քարոզել Ավետարանը բոլոր ազգերին և նրանց մկրտել Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով (հմմտ. Մտթ. ԻԸ 19): Համաձայն Քրիստոսի այս պատգամի՝ առաքյալները սփռվեցին աշխարհով մեկ, քարոզեցին ու դարձի բերեցին շատերի: Ըստ սրբազան Ավանդության՝ Տիրոջ առաքյալներից երկուսին՝ սր. Թաղետոսին և սր. Բարդուղիմեոսին վիճակվեց քարոզել Հայաստանում: Առաջինը Հայաստան է եկել սր. Թաղետոսը: Առաքյալը նախ քարոզում է ասորական Միջագետքում, այնուհետև Եդեսիայում (Ուռհա), որտեղ բազմաթիվ հրաշքներ է գործում և բժշկում Աբգար թագավորին, ապա գալիս է Հայաստան և սկսում քարոզել ու բժշկություններ կատարել Արտազ գավառի Շավարշավան գյուղաքաղաքում, որտեղ գտնվում էր հայոց Սանատրուկ թագավորի ամառանոցը: Թաղետոսը դարձի է բերում շատերին, այդ թվում՝ նաև Սանատրուկ արքայադստերը: Սանատրուկը հրամայում է սրի քաշել բոլոր նորադարձներին և արդյունքում նահատակվում են սր. Թաղետոսն ու Սանատրուկը, որ դառնում է հայազգի առաջին կին մարտիրոսը: Այսօր պատմական Արտազ գավառում (այժմ՝ Իրանի տարածքում) կանգուն է առաքյալի գերեզմանի վրա կառուցված Սուրբ Թաղեի վանքը:

Պատմափայր Մովսես Խորենացին հաղորդում է, որ Հայաստանում քարոզել է նաև Բարդուղիմեոս առաքյալը: Ավանդության համաձայն՝ առաքյալը նախ քարոզում է Պարսկաստանում, հասնում մինչև Հնդկաստան, այնուհետև ութ պարսիկ հետևորդների հետ անցնում Հայաստան: Բարդուղիմեոսը քարոզում է Հեր և Զարևանդ գավառներում, այնուհետև Անձևացյաց գավառում և Աղբակում: Նրա քարոզչության շնորհիվ դարձի են գալիս Սանատրուկ արքայի քույր Ոգուհին, Տերենտիոս հազարապետը և շատ ու շատ մարդիկ: Սանատրուկը, նրանց համոզելու ապարդյուն փորձերից հետո, հրամայում է սպանել: Նորադարձները նահատակվում են սրով, իսկ Բարդուղիմեոսը՝ փշոտ մահակների հարվածներից: Ավանդության համաձայն՝ առաքյալի գերեզմանը գտնվում է պատմական Աղբակ գավառում (այժմ՝ Թուրքիա՝ Բաշկալե), որի վրա կառուցվել է Սուրբ Բարդուղիմեոսի վանքը:

Մեր ժողովրդի առաջին լուսավորիչներ սր. Թաղետոս և սր. Բարդուղիմեոս առաքյալների տոնը այս տարի Հայ առաքելական սուրբ եկեղեցին նշում է նոյեմբերի 28-ին: Հատկանշական է, որ 2014թ.-ից Ամենայն Հայոց Հայրապետի սրբատառ կոնդակով այս տոնը հռչակվեց որպես Աստվածամուխ Սուրբ Գեղարդի ուխտի օր, որի ժամանակ հավատացյալները հնարավորություն ունեն մոտենալու և համբուրելու այն Սուրբ Գեղարդը, որով խոցեցին Հիսուս Քրիստոսին, և որը Հայաստան բերեց հենց սուրբ Թաղետոս առաքյալը:

*Պատրաստեց Լոնգի Ավերիսյանը*



Ֆեյսբուքում մեզ կարող եք հետևել այստեղ՝

[www.facebook.com/gevorgianseminary](http://www.facebook.com/gevorgianseminary)

Ձեր հարցերը կարող եք ուղղել մեզ հետևյալ էլ. հասցեով՝

[gevorgianseminary@gmail.com](mailto:gevorgianseminary@gmail.com)

Հասցե՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Գևորգյան հոգևոր ճեմարան

Հեռախոս՝ (010) 510 180

